ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը մարդու տնտեսական գործունեության ձև է, գյուղատնտեսական արտադրության կարևորագույն ճյուղ, որն ընդգրկում է գյուղատնտեսական կենդանիների և թռչունների բուծումը, անասնապահական մթերքներ ստանալու նպատակով:

Անասնապահությունն աչքի է ընկնում ճյուղային մեծ բազմազանությամբ: նրա գլխավոր ենթաճյուղերն են՝ խոշոր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, ոչխարաբուծությունը, ձիաբուծությունը, ուղտաբուծությունը, թռչնաբուծությունը, ինչպես նաև շերամապահությունը:

Անասնապահությունը բնակչությանը մատակարարում է միս, կաթ, կենդանական յուղ, ձու, իսկ թեթև արդյունաբերությանը՝ բնական հումքի որոշ տեսակներ (կաշի,բուրդ մորթի):

Անասնապահության առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է:

Խոշոր եղջերավոր անասուններ (1.5 մլրդ գլուխ) բուծում են աշխարհի բոլոր շրջաններում և ստանում են մարդկությանն անհրաժեշտ գրեթե ամբողջ կաթը և մսի ավելի քան 1/3-ը:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է.

- Հնդկաստանը
- Բրազիլիան
- Չինաստանը
- ԱՄՆ-ը:

Խոզաբուծությունը, զբաղվում է խոզերի բուծմամբ՝ միս, ճարպ, կաշի և այլ մթերքներ ստանալու համար:

Խոզերի գլխաքանակի մեծ մասը կենտրոնացված է.

- Չինաստանում
- Եվրոպայում (Գերմանիա, Ռուսաստան, Լեհաստան, ֆրանսիա, Ուկրաինա),
- Հյուսիսային Ամերիկայում (ԱՄՆ)
- Հարավային Ամերիկայում (Բրազիլիա):

- Խոզաբուծությունը բացակայում է մահմեդականություն դավանող երկրներում, օրինակ՝ Հարավ-արևմտյան Ասիայի երկրներից շատերում:

Ոչխարաբուծությունը զբաղվում է ոչխարների բուծմամբ՝ բուրդ, միս, կաթ, ոչխարենի, գառնենի, ճարպ ստանալու համար:

Ըստ ստացվող հիմնական արտադրանքի ոչխարաբուծությունը ստորաբաժանվում է նրբագեղմ, կիսանրբագեղմ, կիսակոպտաբուրդ, կոպտաբուրդ ուղղություններին:

Թռչնաբուծությունը զբաղվում է գյուղատնտեսական թռչունների բուծմամբ՝ դիետիկ ձու, թարմ միս, նաև աղվափետուր և փետուր ստանալու համար: Որպես անասնապահության ճյուղ, թռչնաբուծության փոխադարձ կապի մեջ է բուսական մթերք և հումք արտադրող ճյուղերի, մասնավորապես, բուսաբուծությանհետ:

Մեղվաբուծությունը զբաղվում է մեղրատու մեղուների բուծմամբ՝ մեղր, մեղրամոմ ստանալու, ինչպես նաև գյուղատնտեսական բույսերի փոշոտումն ապահովելու համար:

Շերամապահությունը զբաղվում է շերամի թրթուրների բուծմամբ՝ բնական մետաքսահումք (բոժոժ) ստանալու նպատակով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ